ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

19.12.2018թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/180

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2018թ. թիվ 26-3/21039-18 գրությամբ «Հելփ Ռ.Վ.» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 09.11.2018թ. թիվ ԴՎԱ/4410 գրության հիման վրա, 19.11.2018թ. թիվ 26-3/21039-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Հելփ Ռ.Վ.» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Հելփ Ռ.Վ.» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Հելփ Ռ.Վ.» ՍՊԸ-ն 23.11.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-9/22» ծածկագրով մրցույթի թիվ 3, 6 և 8 չափաբաժիններում հաղթող ճանաչվելով մատակարարել է ապրանք, որը չի ընդունվել տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառաբանությամբ, այն է տուփի պարունակությունը:

3-րդ չափաբաժնի տեխ. բնութագրի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 16սմ x 14սմ երկշերտ թանզիֆային ստերիլ անձեռոցը, որի համաձայն ԳՈՍ 16427-93 մատակարարման ժամանակ պետք է փաթեթավորված լինի ստերիլ գործարանային տուփով N 20 կամ այլ քանակի:

Այսինքն՝ կասկած չի առաջացնում, որ գնման առարկան մեկ անձեռոցն է, այլապես կնշվեր տուփում անձեռոցների քանակը, որից կախված է ապրանքի ինքնարժեքը: Իսկ հանձնման պահին այն պետք է փաթեթավորված լինի 20 հատանոց կամ այլ քանակի տուփերի մեջ, քանի որ ստերիլությունը չի ապահովվի:

Ընկերությունը նշել է, որ առաջին տեղը զբաղեցնելուց հետո, երբ ստացել է արձանագրությունը, որտեղ 5-րդ սյունակում հրապարակվել է նախահաշվային գին, որը ոչ մի կերպ չէր կարող տուփի արժեք լինել՝ 20 անգամ 20 տուփի արժեքից փոքր լինելու պատճառով:

Նշված նախահաշվային գինը նախորդ տարվա գնից փոքր է մոտ 20 անգամ, ինչը ևս վկայում է Ընկերության օգտին: Քանի որ ինչպես կարող է Պատվիրատուն ենթադրել, որ այս ապրանքը կարելի է ձեռքբերել 20 անգամ պակաս գնով, երբ երկրում տնտեսական ու ֆինանսական առումով փոփոխություն չի եղել:

Թիվ 8-րդ չափաբաժնով, տեխնիկական բնութագրի համաձայն՝ պատրաստման համար անհրաժեշտ 2870 մետր թանզիֆը տրամադրում է Պատվիրատուն:

Ընկերության կողմից հաշվարկվել է անհրաժեշտ թանզիֆի քանակությունը և պարզվել է, որ հաշվարկում կա թվաբանական սխալ և պակաս է հաշվարկվել ինը հարյուր մետր թանզիֆ, ինչի մասին գրավոր Ընկերությունը հայտնել է Պատվիարտուին, հույս ունենալով,

որ սխալը կշտկվի և պակաս թանզիֆը կտրամադրվի, սակայն Պատվիրատուից ստացվել է մերժում, այն հիմքով, որ նախորդ տարի ևս այս հաշվարկով է տրամադրվել և Ընկերությունը պետք է հայտի ուսումնասիրության շրջանում հայտնաբերեր սխալը:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուն ակնհայտորեն անտեսում է մատակարարի, որպես գործընկերոջ շահերը, իր կողմից թերի և երկիմաստ մեկնաբանման ենթակա եզրույթները մեկնաբանում է իր օգտին, որի պատճառով առաջարկվել է լուծարել պայմանագիրը:

«Հելի Ռ.Վ.» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/180 ընթացակարգի շրջանակներում 23.11.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.11.2018թ. թիվ ԴՎԱ/4410 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Հելի Ռ.Վ.» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքված ԳՀԱՊՁԲ-9/22-1 ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. նոյեմբերի 2-ից մասնակի լուծել է նշված պայմանագիրը:

Միաժամանակ Պատվիրատուն վերը նշված գրությամբ, հայտնել է, որ Պայմանագրի մասնակի լուծման վերաբերյալ գրությունը 07.11.2018թ. միաժամանակ ուղարկել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/188 ընթացակարգի շրջանակներում 23.11.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է

իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով և Պայմանագրի գնման ժամանակացույցով որպես չափման միավոր նշվել է տուփը: Սակայն Ընկերությունը մինչ մատակարարելը համոզված է եղել, որ հրավերով գնման առարկան հաշվարկվել է միավորի գնով, ուստի գնային առաջարկով տուփի համար առաջարկել է միավորի գին: Պատվիրատուն նշել է, որ անհատական փաթեթավորում նշվել է անձեռոցների ստերիլությունը ապահովելու նպատակով:

4. ՍՑ-ԱՄ-2018/180 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/180 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Հելի Ռ.Վ.» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-9/22-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր, որի համաձայն՝ Վաճառողը (այսուհետ՝ «Հելի Ռ.Վ.» ՍՊԸ) պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2.Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նախատեսվել է մատակարարել հետևյալ ապրանքները.

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ
1.	Անձեռոցիկ ստերիլ երկշերտ	ГОСТ 16427-93, չափսը՝ 16 սմ x14 սմ երկշերտ, թանզիվային, ստերիլ, սահմանված քանակությունը մատակարարման ժամանակ պետք է փաթեթավորվի ստերիլ գործարանային տուփերով, N20 կամ այլ քանակի
2.	Անձեռոցիկ ստերիլ երկշերտ	ГОСТ 16427-93, չափսը՝ 45 սմ x29 սմ երկշերտ, թանզիվային, ստերիլ, փաթեթավորումը N1՝ անհատական:
3.	Անձեռոցիկ թանզիվից, մանրէազերծած երկշերտ	Չափսը՝ 7 սմ x12 սմ երկշերտ, թանզիվային, մնացած չափանիշները ГОСТ 16427-93 համաձայն, տուփում 10 հատ
4.	Անհատական վիրակապական փաթեթ	Հավաքածուի կազմում՝ բինտ 7մx10 սմ ստերիլ- 1 հատ, շարժական բամբակ թանզիվային մանրեազերծ բարձիկ 32±1,5 սմ x 17,5±1,0 սմ -1 հատ, անշարժ բամբակ թանզիվային մանրեազերծ բարձիկ 32±1,5 սմ x

		17,5±1,0 սմ -1 հատ / համաձայն ԳOUS 1179-93/, փաթեթավորումը՝ անջրաթափանց N1, պիտ.ժամկետի 95%-ի առկայություն, փաթեթավորման վրա պետք է նշված լինի արտադրող կազմակերպության և արտադրանքի անվանումը, «մանրէազերծ» բառը, արտադրման / մանրէազերծման/ տարին կամ եռամսյակը և պիտանելիության ժամկետը: Պատրաստի վիրակապը մատակարարել Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Արզնու խճուղի: *«ԱՎՓ» պատրաստման համար անհրաժեշտ 15800 մետր թանզիվը կտրամադրվի պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ պայմանագիրը ստորագրվելուց հետո 30 օրյա ժամկետում:
5.	Բ-1 վիրակապական հավաքների ստերիլ վիրակապեր	Ստերիլ վիրակապերի Բ1 հավաքածուն պետք է ունենա հետևյալ պարունակությունը՝ բինտ10x16 ստերիլ-25 հատ, բինտ 7x14 ստերիլ-50 հատ, բինտ 5x10 ստերիլ - 50 հատ, բամբակ ստերիլ՝ 0,5 կգ, վիրակապ ստերիլ 65սմx43սմ N5-20 հատ,վիրակապ ստերիլ 56սմx29սմ N5-40 հատ, բամբակ/թանզիվ բարձ ստերիլ 17.5սմx16սմ N10-5 հատ, թանզիվե անձեռոցիկ երկշերտ 29x45 N10-10 հատ թանզիվ անձեռոցիկ երկշերտ 16x14 N20-20 հատ,փաթեթավորումը պոլիէթիլենային փաթեթով,պիտանելիության ժամկետի 95%-ի առկայություն: Պատրաստի վիրակապը մատակարարել Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Արզնու խճուղի:*«Բ1 վիրակապական նյութերի« պատրաստման համար անհրաժեշտ 2780 մետր թանզիվը կտրամադրվի պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ պայմանագիրը ստորագրվելուց հետո 30 օրյա ժամկետում:

3. Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով նախատեսվել է մատակարարումներն ըստ 2018թ. հետևյալ եռամսյակների.

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/հ	քանակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.
1.	Անձեռոցիկ ստերիլ երկշերտ	տուփ	15000	5000	6000	4000
2.	Անձեռոցիկ ստերիլ երկշերտ	տուփ	10000	2000	4000	4000
3.	Անձեռոցիկ թանզիվից, մանրէազերծած երկշերտ	տուփ	10000		5000	5000
4.	Անհատական վիրակապական փաթեթ	հատ	15000		15000	
5.	Բ-1 վիրակապական հավաքների ստերիլ վիրակապեր	հատ	15		15	

4. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

5. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

6. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված

7.Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

8. Պայմանագրի 2.4 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

9. Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գինը կազմում է 4 309 550 ՀՀ դրամ:

10. Ընկերությունը 09.10.2018թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից մատակարարվել է Պայմանագրի N 4 չափաբաժնող նախատեսված քանակությունները: Չորրորդ եռամսյակում նախատեսված քանակությունը կմատակարարվի համաձայն՝ ժամանակացույցի: N 7 չափաբաժնով նախատեսված ԱՎՓ-ն ևս մատակարարվել է ժամանակին: Ընկերությունը նշված գրությամբ հայտնել է, որ N3, N6 և N 8 չափաբաժինների հետ կապված Ընկերության կողմից բարձրացված հարցերի պատասխանները Ընկերությունը չի ստացել, ուստի հնարավոր չի համարում այդ ապրանքների մատակարարումը:

11. Ընկերությանն ուղղված 07.11.2018թ. թիվ ԴՎԱ/4367 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Հելփ Ռ.Վ.» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-9/22-1 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր 2018թ. 2-4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել 15 000 տուփ «Անձեռոցիկ ստերիլ երկշերտ», 10000 տուփ «Անձեռոցիկ թանզիֆից, մանրէազերծված երկշերտ» և 15 հատ «Բ-1 վիրակապական հավաքների ստերիլ վիրակապեր», սակայն Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան նշված ապրանքների մատակարարում չի իրականացվել, բացի այդ առկա է Ընկերության գրությունը՝ հետագա մատակարարումներն իրականացնելու անհնարինության վերաբերյալ:

Ուստի հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.11.2018թ. մասնակի՝ վերը նշված ապրանքատեսակների մասով, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.11.2018թ. թիվ 26-3/21039-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.11.2018թ. թիվ ԴՎԱ/4410 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Հելի Ռ.Վ.» ՍՊԸ-ի 23.11.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հելի Ռ.Վ.» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-9/22-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր, որի համաձայն Վաճառողը (այսուհետ՝ «Հելի Ռ.Վ.» ՍՊԸ) պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նախատեսվել է մատակարարել հետևյալ ապրանքները.

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ
1.	Անձեռոցիկ ստերիլ երկշերտ	ГОСТ 16427-93, չափսը՝ 16 սմ x14 սմ երկշերտ, թանզիվային, ստերիլ, սահմանված քանակությունը մատակարարման ժամանակ պետք է փաթեթավորվի ստերիլ գործարանային տուփերով, N20 կամ այլ քանակի
2.	Անձեռոցիկ ստերիլ երկշերտ	ГОСТ 16427-93, չափսը՝ 45 սմ x29 սմ երկշերտ, թանզիվային, ստերիլ, փաթեթավորումը N1՝ անհատական:
3.	Անձեռոցիկ թանզիվից, մանրէազերծած երկշերտ	Չափսը՝ 7 սմ x12 սմ երկշերտ, թանզիվային, մնացած չափանիշները ГОСТ 16427-93 համաձայն, տուփում 10 հատ
4.	Անհատական վիրակապական փաթեթ	Հավաքածուի կազմում՝ բինտ 7մx10 սմ ստերիլ- 1 հատ, շարժական բամբակ թանզիվային մանրեազերծ բարձիկ 32±1,5 սմ x 17,5±1,0 սմ -1 հատ, անշարժ բամբակ թանզիվային մանրեազերծ բարձիկ 32±1,5 սմ x 17,5±1,0 սմ -1 հատ / համաձայն ԳOUS 1179-93/, փաթեթավորումը՝ անջրաթափանց N1, պիտ.ժամկետի 95%-ի առկայություն, փաթեթավորման վրա պետք է նշված լինի արտադրող կազմակերպության և արտադրանքի անվանումը, «մանրէազերծ»

		բառը, արտադրման / մանրէազերծման/ տարին կամ եռամսյակը և պիտանելիության ժամկետը: Պատրաստի վիրակապը մատակարարել Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Արզնու խճուղի: *«ԱՎՓ» պատրաստման համար անհրաժեշտ 15800 մետր թանզիվը կտրամադրվի պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ պայմանագիրը ստորագրվելուց հետո 30 օրյա ժամկետում:
5.	Բ-1 վիրակապական հավաքների ստերիլ վիրակապեր	Ստերիլ վիրակապերի Բ1 հավաքածուն պետք է ունենա հետևյալ պարունակությունը՝ բինտ10x16 ստերիլ-25 հատ, բինտ 7x14 ստերիլ-50 հատ, բինտ 5x10 ստերիլ - 50 հատ, բամբակ ստերիլ՝ 0,5 կգ, վիրակապ ստերիլ 65սմx43սմ N5-20 հատ,վիրակապ ստերիլ 56սմx29սմ N5-40 հատ, բամբակ/թանզիվ բարձ ստերիլ 17.5սմx16սմ N10-5 հատ, թանզիվե անձեռոցիկ երկշերտ 29x45 N10-10 հատ թանզիվ անձեռոցիկ երկշերտ 16x14 N20-20 հատ,փաթեթավորումը պոլիէթիլենային փաթեթով,պիտանելիության ժամկետի 95%-ի առկայություն: Պատրաստի վիրակապը մատակարարել Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Արզնու խճուղի:*«Բ1 վիրակապական նյութերի« պատրաստման համար անհրաժեշտ 2780 մետր թանզիվը կտրամադրվի պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ պայմանագիրը ստորագրվելուց հետո 30 օրյա ժամկետում:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով նախատեսվել է մատակարարումներն ըստ 2018թ. հետևյալ եռամսյակների.

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/հ	քանակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.
1.	Անձեռոցիկ ստերիլ երկշերտ	տուփ	15000	5000	6000	4000
2.	Անձեռոցիկ ստերիլ երկշերտ	տուփ	10000	2000	4000	4000
3.	Անձեռոցիկ թանզիվից, մանրէազերծած երկշերտ	տուփ	10000		5000	5000
4.	Անհատական վիրակապական փաթեթ	հատ	15000		15000	
5.	Բ-1 վիրակապական հավաքների ստերիլ վիրակապեր	հատ	15		15	

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայմանագրի 2.4 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գինը կազմում է 4 309 550 ՀՀ դրամ:

Ընկերությանն ուղղված 07.11.2018թ. թիվ ԴՎԱ/4367 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Հելի Ռ.Վ.» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-9/22-1 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր 2018թ. 2-4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել 15 000 տուփ «Անձեռոցիկ ստերիլ երկշերտ», 10000 տուփ «Անձեռոցիկ թանզիֆից, մանրէազերծված երկշերտ» և 15 հատ «Բ-1 վիրակապական հավաքների ստերիլ վիրակապեր», սակայն Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան նշված ապրանքների մատակարարում չի իրականացվել, բացի այդ առկա է Ընկերության գրությունը՝ հետագա մատակարարումներն իրականացնելու անհնարինության վերաբերյալ:

Ուստի հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.11.2018թ. մասնակի՝ վերը նշված ապրանքատեսակների մասով, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Այսպես Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե խախտել է պայմանագրով նախատեսված***

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, արձանագրում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Հելփ Ռ.Վ.» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-9/22-1 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր 2018թ. 2-4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել 15 000 տուփ «Անձեռոցիկ ստերիլ երկշերտ», 10000 տուփ «Անձեռոցիկ թանզիֆից, մանրէազերծված երկշերտ» և 15 հատ «Բ-1 վիրակապական հավաքների ստերիլ վիրակապներ», սակայն Ընկերությունը 09.10.2018թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ վերը նշված ապրանքատեսակների մասով Ընկերության կողմից բարձրացված հարցերի պատասխանները Ընկերությունը չի ստացել, ուստի հնարավոր չի համարում այդ ապրանքների մատակարարումը:

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ «Հելփ Ռ.Վ.» ՍՊԸ-ի կողմից խախտվել են Ընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 30.05.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-9/22-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները, քանի որ Ընկերությունը Պայմանագրին կից գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում պարտավոր էր մատակարարել 15 000 տուփ «Անձեռոցիկ ստերիլ երկշերտ», 10000 տուփ «Անձեռոցիկ թանզիֆից, մանրէազերծված երկշերտ» և 15 հատ «Բ-1 վիրակապական հավաքների ստերիլ վիրակապներ», սակայն հրաժարվել է դրանք մատակարարելուց:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից մատնանշված այն հանգամանքին, որ վերջինիս կողմից գնային առաջարկը ներկայացվել է մեկ անձեռոցի համար, քանի որ գնման առարկան մեկ անձեռոցն է, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով***, տվյալ դեպքում գնման ենթակա անձեռոցների համար «ԳՀԱՊՁԲ-9/22-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրով չափման միավոր նշվել է տուփը:

Միաժամանակ անհրաժեշտ եմ գտնում նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը

բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2018թ. թիվ 26-3/21039-18 գրությամբ «Հելփ Ռ.Վ.» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00086033) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հելփ Ռ.Վ.» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**